ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
<Յունիբանկ> ԲԲԸ 2019թ. գործունեության վերաբերյալ

Հարգելի բաժնետերեր, գործընկերներ, տիկնայք և պարոնայք,

Թույլ տվեք ներկայացնել Յունիբանկի 2019 թվականի գործունեության վերաբերյալ համառոտ հաշվետվությունը:

Նախորդ տարի Յունիբանկը պահպանել է առանցքային ֆինանսական ցուցանիշների զարգացման դրական դինամիկան և առաջընթաց է գրանցել ռազմավարական ուղղություններով: Առավել մեծ ուշադրություն է դարձվել բիզնես գործընթացների արդյունավետությանը, ակտիվների որակի բարելավմանը, ռիսկ մենեջմենթի կատարելագործմանը:

<u>Առանցքային իրադարձություններ</u>

- ✓ Բանկն ընդլայնել է իր ներկայության աշխարհագրությունը և բացել է հինգ նոր մասնաճյուղեր՝ Գևորգ Չաուշ, Գուգարք, Արարատ, Իսակով, Նորագավիթ: Տարեվերջի դրությամբ Յունիբանկի մասնաճյուղային ցանցն ընդգրկում էր 51 մասնաճյուղ Հայաստանում և Արցախում, Մոսկվայում գործում է Բանկի ներկայացուցչությունը, որն օժանդակում է օտարերկրացի հաճախորդների ներգրավման հարցում: Մեկնարկել են Աստանա Միջազգային Ֆինանսական Կենտրոնի հարթակում մասնաճյուղի բացման աշխատանքները՝ որպես օտարերկրյա ներդրումների ներգրավման նոր հնարավորությունների ուղի:

- ✓ Բանկի ներդրումային քաղաքականության նոր մոտեցման իրագործման նպատակով ստորագրվել է Մոսկվայի բորսայում Յունիբանկի պարտատոմսերի ցուցակման վերաբերյալ պայմանագիր:

- ✓ Նախորդ տարի Յունիբանկը նախաձեռնել և ընթացիկ տարվա մայիսին հաջողությամբ ներդրել է արհեստական բանականության տեխնոլոգիան՝ թարմացնելով անգրավ սպառողական վարկերի գծով վարկային սքորինգը: Նորարարական ալգորիթմն օգնում է էապես կրճատել ծախսերը, մշակել մեծ ծավալի տեղեկատվություն, վերլուծել և կառուցել հաճախորդի պրոֆիլը՝ դրանով իսկ նպաստելով զանգվածային վարկավորման աճին:

- ✓ 2019 թվականը Բանկի համար տրանզակցիոն բիզնեսի զարգացման տարի էր: Հաճախորդների արտաքին տնտեսական գործունեության զարգացմանն օժանդակելու նպատակով թղթակցային հարաբերություններ են հաստատվել արտասահմանյան մի շարք բանկերի, այդ թվում՝ Landesbank Baden-ի (Գերմանիա), Banca Popolare di Sondrio-ի (Իտալիա), Եվրասիական Զարգացման Բանկի (Ղազախստան), Տրանսկապիտալբանկի (Ռուսաստան) հետ:

- ✓ Յունիբանկի մոբայլ հավելվածի կատարելագործման ուղղությամբ տարվող մշտական աշխատանքն էապես ավելացրել է օգտատերերի թիվը. 2019թ-ին օգտատերերի թիվը աճել է 8108-ով և ներկայումս գերազանցում է 11.700-ը: 2018թ-ի մոբայլ հավելվածի օգտատերերի թիվն աճել է գրեթե 20 անգամ:

- ✓ Յունիբանկը դարձել է Visa միջազգային վճարային համակարգի մրցանակի հաղթող «Largest Visa Issuance in Armenia» անվանակարգում՝ Հայաստանում Visa քարտերի թողարկման թվով առաջատար դիրքի համար:

- ✓ 2019թ. հուլիսին Moody's Investors Service միջազգային վարկանշային գործակալությունը հաստատել է Յունիբանկի վարկանիշը B2 մակարդակում՝ կայուն հեռանկարով:

- ✓ Շարունակելով ներդրումներն առաջատար տեղեկատվական տեխնոլոգիաներում՝ Յունիբանկը հաջողությամբ անցել է PCI DSS ստանդարտի պահանջների համապատասխանության ամենամյա հավաստագրային աուդիտը և ISO 27001:2013 ստանդարտի համապատասխանության վերահավաստագրումը՝ հերթական անգամ հաստատելով իր հաճախորդների անձնական տվյալների պաշտպանվածության բարձր մակարդակը:

<u>Համառոտ ֆինանսական ցուցանիշների մասին</u>

Համաձայն Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների՝ Բանկը 2019 թվականն ամփոփել է հետևյալ ցուցանիշներով՝

- ✓ **ԱԿՏԻՎՆԵՐՆ** աճել են 39.2 մլրդ դրամով և կազմել են 249 մլրդ դրամ:
- ✓ **ՎԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ** կազմել են 141.4 մլրդ դրամ, կամ ընդհանուր ակտիվների 57%-ը: ՀՀ դրամով տրամադրված վարկերը կազմել են ընդհանուր վարկային պորտֆելի 56%-ը: Վարկավորման միջին տոկոսադրույքը կազմել է տարեկան 9.9%: 2019թ-ին Յունիբանկի վարկային պորտֆելն աճել է 5%-ով: Վարկերի գծով ժամկետանց պարտավորությունների մակարդակը 39%-ից նվազել է մինչև 24%:
- ✓ **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ** ծավալը կազմել է 215.2 մլրդ դրամ՝ աճելով 38 մլրդ դրամով:
- ✓ **ԱՎԱՆԴՆԵՐԻ** պորտֆելը կազմել է 189.7 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 38.3 մլրդ դրամով: Աճը հիմնականում ապահովվել է իրավաբանական անձանցից ներգրավված ցպահանջ միջոցների հաշվին:
  Ընդհանուր պարտավորությունների գծով ֆինանսավորման արժեքը նվազել է 0.15 տոկոսային կետով:
  Թողարկված պարտատոմսերի պորտֆելն աճել է 947 մլն դրամով՝ հասնելով 9.5 մլրդ դրամի:
- ✓ **ԶՈՒՏ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ** կազմել են 10.1 մլրդ դրամ, զուտ տոկոսային մարժան կազմել է տարեկան 4.83%՝ 1.21 տոկոսային կետով ցածր է 2018թ. ցուցանիշից: Նվազումը պայմանավորված է գլխավորապես վարկավորման արդյունավետ տոկոսադրույքի առավելագույն չափի սահմանափակման կիրառմամբ:
- ✓ **ՈՉ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ** կազմել են 4.4 մլրդ դրամ, նվազումը՝ 2.9%-ով:
- ✓ **ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՇԱՀՈՒՅԹԸ** կազմել է 14.5 մլրդ դրամ, 1.8%-ով նվազումը պայմանավորված է վարկավորման տոկոսադրույքների նվազմամբ:
- ✓ **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼԸ** կազմել է 33.8 մլրդ դրամ: Տարեվերջի դրությամբ կապիտալի համարժեքության գործակիցը կազմել է 14.57%, ինչը գերազանցում է ՀՀ կենտրոնական բանկի սահմանած նվազագույն մակարդակը (12%):
- ✓ **ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԸ** կազմել է 1.327 մլն դրամ, ինչը 42%-ով գերազանցում է է 2018 թվականի ցուցանիշը:

<u>Կորպորատիվ բիզնես</u>

Փոքր և միկրո բիզնեսի վարկավորումը շարունակել է մնալ Յունիբանկի զարգացման գերակա ուղղություն կորպորատիվ սեգմենտում՝ պոտենցիալ նիշաների ընտրության նկատմամբ ճյուղային մոտեցման կիրառմամբ: 2019 թվականի ընթացքում փոքր և միջին ձեռնարկություններին տրամադրված վարկերի պորտֆելը քանակական արտահայտմամբ աճել է 24%-ով և կազմել ավելի քան 27 մլրդ դրամ:

Յունիբանկի ընտրության պարագայում վարկավորման պայմաններից բացի կարևորագույն գործոն է հանդիսանում ճկուն մոտեցումը, հաճախորդի բիզնեսի առանձնահատկությունների ընկալումը և վարկի վերաբերյալ որոշումների կայացման արագությունը: <Պրոտոբեյզ Լաբորաթորիզ> ընկերության նորագույն CRM-համակարգն ապահովել է անգրավ բիզնես վարկավորման ֆլագմանյան գործիքի բարձր պահանջարկը՝ 1.4 մլրդ դրամ գումարի տրամադրումների ծավալով, ինչը 30%-ով գերազանցում է 2018թ.

ցուցանիշը: <Էքսպրես>՝ մեծ պահանջարկ ունեցող գործիքի պորտֆելը արձանագրել է ծավալի ավելի քան 5 մլրդ դրամի ռեկորդային աճ:

Տարվա ընթացքում Բանկը շարունակել է աշխատանքը ֆինանսավորման ծրագրերով՝ KfW Գերմանական զարգացման բանկի հետ՝ արևային էլեկտրակայանների ձեռքբերման, FMO Հոլանդական զարգացման բանկի հետ՝ Հայաստանում կանանց ձեռնարկատիրության աջակցման, Եվրոպական ներդրումային բանկի հետ՝ գյուղատնտեսության և զբոսաշրջության ոլորտներում:

Կորպորատիվ վարկային պորտֆելի միջին կշռված անվանական տոկոսադրույքը 2019թ-ին, շուկայի դինամիկային համահունչ, նվազել է 1.7 տոկոսային կետով և կազմել է տարեկան 9.6%:

Էական աճ է դիտվել իրավաբանական անձանց ցպահանջ միջոցների պորտֆելի գծով՝ 37.1 մլրդ դրամով, պորտֆելը կազմել է 68.7 մլրդ դրամ:

Ակտիվ կորպորատիվ հաճախորդների քանակը հասել է 3108-ի, հիմնականում փոքր բիզնեսի ձեռնարկությունների հաշվին:

<u>Մանրածախ բիզնես</u>

2019 թվականին Յունիբանկը ֆիզիկական անձանց տրամադրել է 70.8 մլրդ դրամ գումարի վարկեր, սպառողական վարկավորման ծավալն ապահովված է այդ թվում հարմարավետ գործիքակազմի մշակման և տոկոսադրույքների իջեցման հաշվին: Մեծ պահանջարկ են շարունակել ունենալ անգրավ սպառողական վարկերը և ոսկու գրավով վարկերը: Ապառիկ վարկերի թվով Յունիբանկը 2019 թվականի 4-րդ եռամսյակում առաջատար դիրք է զբաղեցրել Հայաստանի բանկային համակարգում: Մանրածախ վարկային պորտֆելի միջին կշռված անվանական տոկոսադրույքը 2019թ. ընթացքում նվազել է 0.9 տոկոսային կետով և կազմել է տարեկան 11.4%:

Ֆիզիկական անձանց Ժամկետային ավանդների պորտֆելը տարեսկզբից աճել է 8.4 մլրդ դրամով, կամ 9.5%-ով: Բանկի թողարկած պարտատոմսերի պորտֆելի կառուցվածքում տեսակարար կշռի 80%-ը բաժին է ընկնում ֆիզիկական անձանց պարտատոմսերին, ինչը վկայում է բնակչության բարձր վստահության և երկարաժամկետ ներդրումային գործիքում սեփական խնայողությունները ներդնելու պատրաստակամության մասին:

2019թ. վերջի դրությամբ ակտիվ մանրածախ հաճախորդների քանակը գերազանցել է 344.000-ը:

<u>Կորպորատիվ կառավարում</u>

Լինելով բաց բաժնետիրական ընկերություն՝ Յունիբանկը զարգացնում է կորպորատիվ կառավարումը՝ կատարելագործելով Բանկի բաժնետերերի և ղեկավարության միջև փոխհարաբերությունների համակարգը և պահպանելով տեղեկատվական թափանցիկությունը:

2019թ. ընթացքում անցկացվել են՝

Խորհրդին կից հանձնաժողովների՝

- Աուդիտի և ռիսկերի կառավարման հանձնաժողովի - 4 նիստեր
- Ներդրումային հանձնաժողովի - 19 նիստրեր
- Պարգևատրումների հանձնաժողովի - 1 նիստ

Վարչությանը կից հանձնաժողովների՝

- Ակտիվների և պասիվների կառավարման հանձնաժողովի – 42 նիստեր
- Սակագնային հանձնաժողովի - 12 նիստեր
- Անձնակազմի գնահատման հանձնաժողովի - 13 նիստեր
- Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական անվտանգության հանձնաժողովի - 4 նիստեր
- Գույքագրման, գնումների և օտարման հանձնաժողովի – 11 նիստեր

Ակտիվ գործում են նաև Պահուստների կառավարման հանձնաժողովը, Վարկային կոմիտեն, Տենդերային հանձնաժողովը, Վարկային սքորինգի հանձնաժողովը:

Կադրային քաղաքականություն

2019թ-ին Բանկի կադրային քաղաքականությունը միտված էր բիզնես նպատակների իրագործման ապահովմանը աշխատակիցների պրոֆեսիոնալ մակարդակի բարձրացման և դրա իրականացման համար անձնակազմի մոտիվացման միջոցով: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել ներկորպորատիվ մշակույթի զարգացմանը՝ աշխատողների մասնագիտական կոմպետենտության բարձրացման նպատակով ներքին ուսուցման, ինչպես նաև բուհերից ներգրավված հեռանկարային փորձնակների ուսուցման միջոցով:

Շարունակվում են աշխատանքները օպտիմալ կազմակերպչական կառուցվածքի ձևավորման ուղղությամբ: 31.12.2019թ. դրությամբ Բանկի աշխատակիցների թվաքանակը կազմել է 840 մարդ:

ՀՀ ԿԲ պահանջներին համապատասխանությունը

Հաշվետու տարվա ընթացքում ՀՀ Կենտրոնական բանկի կողմից իրականացված ստուգումների, ինչպես նաև Համապատասխանության ապահովման դեպարտամենտի իրականացրած մշտադիտարկման արդյունքում արձանագրված խախտումների և անհամապատասխանությունների վերացման և ապագայում դրանց բացառման նպատակով իրականացվել են համապատասխան միջոցառումներ՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:

2019թ. ընթացքում ՀՀ Կենտրոնական բանկի կողմից Բանկի և Բանկի ղեկավարների նկատմամբ տուգանքներ չեն կիրառվել: Մեկ խախտման մասով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի Պետական հարկային ծառայության կողմից Բանկի նկատմամբ կիրառվել է պարտավորություն ՀՀ պետական բյուջե լրավճարել 6.957.470 ՀՀ դրամ շահութահարկի գծով:

Բանկի կողմից եկամտահարկի գծով ՀՀ պետբյուջե 166.096.716 ՀՀ դրամի վճարման գծով պարտավորության ենթադրյալ խախտումը բողոքարկվել է, և բողոքը բավարարվել է:

2018թ-ին ՀՀ Կենտրոնական բանկի կողմից իրականացված Բանկի գործունեության նպատակային ստուգման արդյունքներով հաստատվել և ՀՀ ԿԲ-ի հետ համաձայնեցվել է անհամապատասխանությունների և խախտումների վերացմանն ուղղված միջոցառումների ծրագիր, որի պատշաճ կատարման նկատմամբ խիստ վերահսկողություն է իրականացվում:

2020թ. ռազմավարական առաջնահերթությունները

Կորոնավիրուսի համավարակի ֆոնին վերջին ամիսների իրադարձությունները փոփոխել են Բանկի հետագա զարգացման խնդիրներն ու առաջնահերթությունները, և Բանկի ղեկավարությունը վերանայում է տարեկան կանխատեսումները՝ վերլուծելով Յունիբանկի զարգացման տարբեր սցենարներ:

Քաղաքացիների և բիզնեսի օժանդակությանն ուղղված քայլերի շրջանակում Յունիբանկը մասնակցում է կառավարության՝ փոքր և միջին բիզնեսի խթանման, սոցիալական աջակցության նպաստների վճարման ծրագրերին, վարկերի գծով մարումների հետաձգման, վարկերի վերակառուցման հնարավորության տրամադրմանը, հաճախորդների հետ անմիջական շփումն առավելագույնս սահմանափակելու նպատակով Բանկը ստեղծել է մոբայլ բանկինգի համակարգին հեռավար միանալու հնարավորություն:

Յունիբանկի կողմից 2020թ. հաստատված ռազմավարության շրջանակներում նախանշված են զարգազման հետևյալ առանցքային առաջնահերթությունները՝

- ✓ տեխնոլոգիական կատարելագործում, թվային հարթակներում վաճառքների զարգացում,
- ✓ վարկավորման բնագավառում արհեստական բանականության տեխնոլոգիաների հետագա զարգացում,
- ✓ հաճախորդամետ մոտեցման զարգացում և հաճախորդների պահանջմունքների խորը վերլուծության հիման վրա սպասարկման և գործիքակազմի ձևավորում նաև նրանց կոնտրագենտների համար,
- ✓ Յունիբանկի ֆինանսական արդյունավետության և բանկային համակարգում դիրքերի բարելավման ապահովում, Բանկի ներդրումային գրավչության բարձրացում:

Ավարտելով ելույթս՝ կցանկանայի շնորհակալություն հայտնել այս միջոցառման բոլոր մասնակիցներին, Բանկի բաժնետերերին, գործընկերներին և հաճախորդներին՝ վստահության և աջակցության համար, Յունիբանկի աշխատակիցների թիմին՝ պրոֆեսիոնալ և համախմբված աշխատանքի համար:

<Յունիբանկ> ԲԲԸ Վարչության անունից՝

Մեսրոպ Հակոբյան

Վարչության նախագահ

15.06.2020թ.